պէս պետական խորտակման տանող սոսկալի քնից: Զգաստանալով և ապաշխարելով, նորից քրիստոնէական կեանքին դառնալով, նորից կրելով նրան մեր հոգու մէջ, մենք արդէն իրաւք կը կարողանանք ասել. «մեզ հետ է Աստուած»: Բայց այդ նշանաւոր ու մխիթարական խօսքերը այնպէս չենք ասիլ, ինչպէս առաջ էինք ասում. ոչ թէ հպարտութեամբ և անմիտ անձնագովութեամբ ուրիշ ազգերի առաջ և ոչ էլ թեթևամտօրէն՝ յուսալով համաշխարհային տիրապետութեան վրայ. այլ կրած նսեմութիւնից և կորուստներից յետոյ՝ մենք կասենք «Աստուած մեզ հետ է» խոնարհեցրած գլխով, հեզ և մեր անարժանութիւնը հասկանալով, զգալով Աստուծոյ առաջ պատասխան չունենալները. և՛ասենք մի միայն նրա համար, որ արտայայտել կարողանանք մեր ուրախ համոզմունքը, որ ինչքան էլ երկրիս վրայ յաղթանակի մոլորութիւնը, ինչ շահ էլ խոստանալիս լինի աշխարհի սկզբունքներին հետևելը, մենք չենք գնայ այդ դրօշակի ետևից, որովհետև վերջնական յաղթանակը, յաւիտենական յաղթութիւնը պատկանում է Աստուածային թագաւորութեան և քրիստոնէական ճշմարտութեան, որին Աստուածային ողորմութեամբ մենք էլ հաւատում ենք և մեր ոյժերի ներածին չափով աշխատում ենք ապրել»:

—Հրաշալի խօսքեր և մարգարտաշաղ մտքեր: Ո՞ւր էր, թէ այդպէս մտածէին և ապրէին մեր վարիչները և իրենց մեքենայութեանց վրայ յոյս դրած, դժբաղդութիւն չը պատրաստէին ամբողջ ժողովրդի համար:

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ֆրանսիական նախկին նախարար Կոմբը պալատում խօսած ժամանակ եկեղեցին պետութիւնից բաժանելու պատճառ էր համարում այն հանգամանքը, որ Պապն ու եպիսկոպոսները սիստեմատիքաբար միշտ խախտել են կոնկորդատը: Այդ մեղադրանքը Պապի կողմից անպատասխան չը մնաց: Գաղանի Կոնսիստորիայում Նոյեմբերի 14-ին Պիոս X Պապը նախ քան ընթացիկ խնդիրներին անցնելը, նոր որբերն յայտարարելն ու նոր եպիսկոպոսներ նշանակելը՝ իւր կարդինալներին ուղղած ճառով կամեցաւ կանգ առնել Ֆրանսիական գործերի վրայ և հերքել բարդած մեղադրանքը: Բացատրելով երկու կողմերի կոնկորդատով ընդունած պարտաւորութիւնների էութիւնը, Պապն ապացուցանում է, որ ոչ թէ եկեղեցին, որը միշտ պահպանել է դաշ-

նագրի պայմանները, այլ ֆրանսիական կառավարութիւնն է խախտում այն։

Կոնկորդատը (դաշնագիրը) վերապահում է կաթոլիկներին ազատ դաւանութիւն, մինչդեռ Ֆրանսիայում եպիսկոպոսներին արգելում են առանց կառավարութեան գիտութեան այցելել կամ գրագրութիւն ունենալ Պապի հետ. որը բարձրագոյն ուսուցիչ է և դէտ կաթոլիկութեան։ Բացարձակ անարգում Հռոմէական միաբանութիւնները, որոնք կառավարւում են Պապի տիեզերական եկեղեցիով ու հեղինակութեամբ։ Վանականների խմբերն արտաքսուած են հայրերի կրօնը պահպանելու պատճառով և դեռ նորերս հեռացրին դպրանոցներից նրանց վարիչ միաբանութեան անդամներին։ Կառավարութիւնը թոյլ չի տալիս ձեռնադրել Պապի ընտրուած մարդկանց, մինչև որ չեն հաստատւում պաշտօնում Պապից մերժուածները. հակառակ դաշնագրի՝ եպիսկոպոսների և ուրիշ պաշտօնեաների ռոճիկները կարճում են առանց քննութեան, դատի ու պաշտպանութեան։ Չի կարելի յուսալ, թէ ապագայում թշնամութիւնը կը վերջանայ։ Մի քանի նոր փաստերը ցոյց են տալիս, որ կառավարութիւնն այնչափ է գրգռուած եկեղեցու դէմ. որ մօտ ապագայում կարելի երկիւղ կրել թէ, կը դիմեն խիստ միջոցների, որովհետև հակառակ Ս. Աթոռի յայտարարութեան. կառավարութիւնն ըստ երևոյթին կարծում է, որ հաստատակամութիւնը չի կարող որևէ յարաբերութեան մէջ մտնել քրիստոնէական կրօնի հետ ու կրկնակի զրպարտութիւն ֆրանսիացիների մասին՝ թէ կաթոլիկների և թէ որպէս քաղաքացիների մասին։ Բայց ինչ դէպքեր էլ պատահելու լինեն, յայտարարեց Պապը, նոքա մեզ անպատրաստ չեն գտնիլ և չեն սարսափեցնիլ, որովհետև մեզ քաջալերում է մեր Տէր Յիսուսի ձայնն ու յորդորը «եթէ Ձիս հալածեցին և զձեզ հալածեսցեն. (15—20) Յաշխարհիս այսմիկ զնեղութիւն ունիցիք, քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի»։ (Յով. 16—33) Վերջացնելով խօսքը, Պապը յորդորել է կարդինալներին սրտագին աղօթել առ Աստուած, որ Նա, ուղղիչն կամաց մարդկան, փութայ խաղաղութիւն և անդորրութիւն պարգևել իւր ս. եկեղեցուն։

Իտալիայում վերջերս տեղի ունեցած ընտրութիւնների ժամանակ՝ երկար չեղոք մնալուց յետոյ, վերջապէս Պապին հաւատարիմ կաթոլիկներն հանդէս եկան թէ որպէս ընտրելի և թէ որպէս ընտրողներ։ Նախկին պապերը խստութեամբ ար-

գելում էին մասնակցել ազատուած Իտալիայի քաղաքական կեանքին: Թէև նախկին արգելքը դեռ չի կորցրել իւր ոյժը, սակայն ժամանակի ընթացքում փոխուող հանգամանքների շնորհիւ՝ որոշ փոփոխութիւններ թոյլատրուեցին այդ բանում: Զիջանելով կաթոլիկ ռամկավարների խնդրանաց և ցանկանալով կառավարութեանը օգնութեան հասնել ընկերվարականների դէմ մղուած կռուում, Պիոս X-ը, ինչպէս լրագիրներն հաղորդում են, թոյլատրեց եպիսկոպոսներին, որ ծայրահեղ կուսակցութեանց թեկնածուների ընտրութեանը խոչնդոտ լինելու համար, եպիսկոպոսներն իրաւունք տան կաթոլիկներին ընտրելու և ընտրուելու, պարտաւորեցնելով, որ նրանք պաշտում եկեղեցու հակառակ ոչ մի օրէնք չը պաշտպանեն: Այս փոփոխութիւնը ուրախութեամբ ընդունուեց երկրում, որպէս նպաստաւոր մի երևոյթ Պապի խաղաղասէր տրամադրութեան և իւր հետևանքներն էլ ունեցաւ. ընտրութիւններից յետոյ պահպանողական կուսակցութիւնը դգալի կերպով զօրացաւ: Ի միջի այլոց ընտրուեցին և երկու կաթոլիկ պատգամաւորներ:

ԿՐՕՆՔ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

(Ջեմս Բրայս).

Շնորհիւ այն հանգամանքի, որ այդպիսի խնդիրներն Ամերիկայում վաղուց արդէն լուծուած են սահացել և այլևս մաքեր չեն զբաղեցնում, մասամբ էլ գոնէ այն պատճառով, որ ամերիկացիք առաւել տրամադիր են գործնական ազատութեան, քան մանրակրկիտ ճշտապահութեան, թէ ազգային և թէ նահանգների կառավարութիւններն կարծես պաշտօնապէս քրիստոնէութիւնը տիրող կրօն են ընդունում և այդպիսով շեղուում են այն հիմնական կանոնից, որ աշխարհային իշխանութիւնը կրօնական գործերում չեզոք պէտք է լինի: Իրաւասուների իւրաքանչիւր ժողովում կայ հոգևորական մի անձն, որը նիստերը բաց է անում որոշ աղօթքով: Հունձը վերջանալուց յետոյ հասարակապետութեան նախագահը հրատարակում է շրջա-